ՍՈՒՔԵՂ ՍԱՐԳԱՐՅԱՆ

ՆՈՐ ԳՈՒԼԻՎԵՐԸ



ՊՐԱԿ 3

ԹԵՀՐԱՆ, 1949 թ. ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՆԶԱՓ»

Ո՞Վ ՇԱՀԵՑ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ

ԲՐԱՏՖՈՐԴ ՄԵՔԵՆԱՆ

Ինչպես արդեն տեղյակ են մեր բոլոր ընթերցողները, էսֆանդ 20-ին, «Մելլի» վիճակահանության ժամանակ 250,000 բիալը շահեց № 07306 տոմսը և որովհետև «Նոր Գուլիվերը» գրքույկների քանակը 5999-ից ավելի չէր, ուստի «Մանկական Պալատ» ներկայացան վերջին երեք թվանշաններով (306-ով) վերջացող գրքույկների տերերը և փոխադարձ համաձայնությամբ կնքեցին ու գործադրեցին ներքոհիշյալ ակտը.

ԱԿՏ

Մենք, ներքո ստորագրողներս, սրանով հաստատում ենք, որ «Մանկական Պալատի» օգտին հրատարակված «Նոր Գուլիվերը» գրքույկի առաջին պրակի մրցանակ. «Բրատֆորդ» մեքենան, համաձայն 29 մարտ, 1949 թվակիր ակտի, որը կազմվել և ստորագրվել է հինգ հոգուս կողմից, պաշտոնական փաստաթղթերով ստացանք «Մանկական պալատից» պ. Մինաս Իսաղուլյանի անունով և վաճառելով այն մեքենան պ. Մինաս Իսաղուլյանին՝ ստացանք յուրաքանչյուրս մեր լրիվ բաժինը։

Մեքենան գտնվում էր նորոգված և լավ դրության մեջ, որը նույնպես հաստատում ենք բոլորս։

Ստորագրել են՝

№ 1306 գրքույկի տեր՝ պ. Մինաս Իսաղուլյան
№ 2306 « « պ. Մանաս Հովսեփյան
№ 3306 « « պ. Հրայր Գրիգորյան
№ 4306 « « պ. Վարուժան Շահինյան
№ 5306 « « պ. Մարտիրոս Աղաջանյան

5 Ապրիլ, 1949 թ.
Թեհրան

Ոստիկանապետը զարմացած բարձրացավ տեղից և վերցնելով փաստաթուղթը՝ կարդաց.

«Սույն դիպլոմը Քեմբրիջի աերո-ինստիտուտի կողմից տրվում է քաղաքացի Սամվել Բորյանին առ այն, որ նա 194... թվին ընդունվել է Լոնդոնի աերո-ինստիտուտը և ավարտել է ուսման դասընթացները 194... թ. հուլիսին, սավառնակներ կառուցելու մասնագիտությամբ:

«Քաղաքացի Ս. Ա. Բորյանը պետական կվալիֆիկացիոն կոմիսիայում կատարել է դիպլոմային աշխատանք նյութ ունենալով սավառնակի աերո-դինամիկ հաշիվները և զարգացնելով «550 ձիու ուժ ունեցող անթեւ սավառնակի» հիպոտեզը, էլեկտրական շարժիչով, որի համար ստացել է «ԳԵՐԱԶԱՆՑ» գնահատական:

«Վերոհիշյալի հիման վրա քաղաքացի Ս. Ա. Բորյանը ստանում է աերո-ինժեների կոչում և իրավունք ունի աշխատելու բոլոր աերո-գործարաններում իբրեւ այդպիսին:»

Ոստիկանապետը նայեց Ֆարջամիի ուրախ, հաղթական դեմքին և ձեռքը մեկնելով՝ ասաց.

— Դուք իրավացի եք,— պրոֆեսոր Բորյանը փախցրել է Գուլիկին իր հնարած անթև սավառնակով։ Այդ գործի քննությունը, հանձնում եմ ձեզ ամենալայն իրավունքներով։ Գտեք և ձերբակալեք Բորյանին։ Ինձ տեղյակ պահեք ձեր յուրաքանչյուր քայլից, որովհետև այս անգամ մենք գործ ունենք քսաներորդ դարի ամենախելոք և ճարպիկ ոճրագործի հետ։

Ֆարջամին թոթվեց պետի ձեռքը և դուրս եկավ առանձնասենյակից՝ թևավորված իր ապագա գործունեության հուսալից հեռանկարներով։

ՀՈՒԼԴԱՍԵՆՅԱԿ ԳՐԱԴԱՐԱՆ
ՍԱՊԵՍԻՆ

4.

Վիթխարի մանկան առաջին քայլերը: Համր է աշխարհը... Խոշորացույցը եւ քաղցի առաջին նոպան:

Եթե անսպասելի կերպով Գուլիկի գլուխն ու ուսերը չանհետանային մոտեցող բամբականման ամպի մեջ, գուցե Գուլիկն այդքան պարզ չզգար իր հետ կատարված փոփոխությունը։ Նա ձեռքերով ցրեց մշուշը և նստեց գետնին։

Ծնկները գրկած Գուլիկն ընկավ մտածմունքի մեջ. կացությունը դժվար էր և անտանելի։ Նախ և առաջ պիտի մտածել հագնվելու մասին, որովհետև այդ գերբնական աճի հենց առաջին վայրկյանին նրա հագուստները վարդի թերթիկների պես կտոր-կտոր լինելով վայր թափվեցին և Գուլիկը մնաց բոլորովին մերկ։

Ամենամեծ գաղանի մորթը կարող էր ծածկել մեր հերոսի ճկույթ մատի կեսը միայն, իսկ քանի-քանի կով կամ փիղ պիտի զոհվեին, որ նրանց մորթիներով կարելի լիներ Գուլիկի համար մի վարտիք պատրաստել...

Գուլիկի մտածմունքը խանգարեց մի 7-8 սանտիմետր երկարություն ունեցող բզեզ, որը սահուն կիսաշրջան գծելով, եկավ նստեց նրա ծնկանը։ Տղան զարմացած նկատեց, որ բզեզը թև չուներ։ Ուշադիր նայելուց հետո միայն տեսավ, որ իր ծընկան նստած բզեզը ոչ այլ ինչ է, եթե ոչ պրոֆեսոր Բորյանի նորագյուտ սավառնակը։

Գուլիկը զգուշությամբ վերցրեց սավառնակը և սկսեց զննել։ Հանկարծ նա նկատեց վերևից բացվող մի կլոր դռնակ, որտեղից երևաց նախ գիտնա-

կանի փոքրիկ, լուցկու գլխի չափ գլուխը, հետո ուսերը և վերջապես ամբողջ մարմինը։ Տեսնելով այդ մանրանկարային ծերուկին, որը մի կես ժամ առաջ Գուլիկի համեմատ հսկա էր՝ տղան ծիծաղից թուլացավ։ Գիտնականը անօգուտ կերպով աշխատում էր Գուլիկին մի բան հասկացնել, սակայն նրա ձայնը ամենևին չէր լսվում։

Գուլիկը դրեց սավառնակը գետին և ինքը ևս մեկնվելով իր վիթխարի բոյով՝ մոտեցրեց դեմքը պրոֆեսորին, որը նավակից դուրս ցատկելով անբսպասելի կերպով սկսեց հետ ու առաջ վազել։

Ծերունի պրոֆեսորի այդ տարօրինակ մարզանքին տարակուսանքով նայող Գուլիկը հանկարծ հասկացավ խելոք գիտնականի վազքի պատճառը, և հիացած սկսեց հետևել նրա անցած ճամբին։

Հետ, առաջ, աջ ու ձախ վազելով պրոֆեսորը «գրում էր»...

Սկզբնական մի քանի տառը կարդացած չլինելով՝ տղան ենթադրությամբ լրացրեց առաջին բառը.



— Հասկացա,— ասաց Գուլիկը որքան կարող էր ցածր ձայնով, որովհետև զգում էր ինչպես ամեն անգամ, իր խոսելու ժամանակ, ծերունի գիտնականը փակում էր ականջները և կծկվում։ Տղան հասկանում էր, որ իր պես լեռնաչափ հսկայի ձայ-

նը, թզուկ գիտնականի համար, ամպի որոտից ավելի ուժեղ է և ահեղազդորդ։

Գուլիկը դեռ շատ բան ուներ հարցնելու, բայց իր հետ կատարված զարմանալի և տարօրինակ փոփոխությունն այնքան անակընկալ էր, որ նա դեռ չէր կարողացել ամփոփել իր մտքերը, երբ գիտնականի սավառնակը արագ բարձրացավ և սահուն թռիչքով անյայտացավ հորիզոնում։

Մնալով մենակ մեր հերոսը առաջին հերթին զբաղվեց շրջապատի հետազոտությամբ։ Գետինը, որի վրա կանգնած էր նա բոբիկ ոտներով՝ քաղաքի պողոտաների նման հարթ էր ու ողորկ, ավելի ճիշտ՝ նրա ահագին, մոտ 20 մետրանոց ոտների համար անկատելի էին լայնատարած դաշտի այն բոլոր անհարթությունները ու թփերը, քարերն ու փոսերը, որոնցով լիքն էր դաշտավայրը։

Այդ հարթ գետինը հեռվում ակոսված էր մի քանի սպիտակ ու բարակ գծերով։ Դրանք քաղաքից դեպի երկրի չորս կողմը երկարող խճուղիներն էին, որոնց վրայով դանդաղ սողում էին լուցկու տուփի չափ բեռնատար մեքենաներ։

Ձախ կողմում, ճիշտ իր ոտների մոտից տարածվում էր կանաչկոտ ու գեղեցիկ, սակայն ամենն տեսակի ծաղիկներից, թիթեռներից ու թռչուններից զուրկ մարգագետինը։

Դա այն մեծ, սաղարթախիտ անտառն էր, որի միջով հոսում էր փրփրաղեղ ու սրընթաց գետը։

Գուլիկը կանգնեց գետի վրա, դնելով մի ոտն այս՝ ու մյուսը այն ափին և հագեցրեց ծարավը թեև փոքր ինչ պղտոր, բայց սառը ջրով։

Ծածկելու համար իր մերկությունը նա արմատախիլ արեց մի քանի տասնյակ բարդի, կապոտեց իրարու և գոգնոց շինելով կապեց մեջքից։

— Առայժմ բավականանանք սրանով,— մտածեց նա գոհունակությամբ ժպտալով,— մինչև լիլիպուտների արքան կարգադրի իր դերձակներին ինձ համար հագուստ կարել։

Շարժումները կաշկանդող անհարմար մերկությունից ազատվելով, Գուլիկը որոշեց քնել։ Մարմինը հոգնած էր և ձեռք ու ոտքը թմրած։ Գլխացավն անցել էր, սակայն հարվածից գոյացած ուռուցքը դեռ ցավում էր։

— Ծերուկը չի սխալվել,— անցավ նրա մտքով,— չնայած ինձ հետ կատարված այս մեծ փոփոխության՝ բոլոր զգայարանքներս աշխատում են։ Նույնիսկ գլխիս ուռուցքը շարունակում է աճել։

Գուլիկը պառկեց կանաչկոտ մարգագետնում և մի քանի րոպե հետո քնեց քաղցը ու անդորը քնով, առանց մտահոգվելու այն ծանր կացությամբ, որի մեջ գտնվում էր այժմ շնորհիվ իր հսկա հասակի։

Քամին ցրտեց։ Կուտակված ամպերից սկսեց մաղել անձրևը, իսկ Գուլիկը շարունակում էր որոտաձայն խռմփալ առանց անդրադառնալու, որ ինքը, չնայած իր հրաշալի, գերբնական հասակին՝ գտնվում է ամենածանր և դժվար դրության մեջ...

Երբ Նոր Գուլիվերը արթնացավ, արևն ուրախ փայլում էր անամպ, կապույտ երկնքում։ Օդը չափազանց մաքուր էր, թթվածինով հագեցած և զուրեկան։ Հսկան նստեց և անհանգիստ նայեց չորս կողմը։

Առաջին հերթին նա հիշեց գիշերվա ծանր երազը, ծերունի զիտնականին և անթև սավառնակը։ Զարմացած, թե ինչու է գտնվում բաց երկնքի տակ, Գուլիվերը նայեց իր մերկ մարմնին և սարսափած հասկացավ, որ տեսածը երազ չէր՝ այլ դաժան, սարսափելի իրականություն։

Մի հանգամանք անտանելի կերպով սկսեց ճընշել Գուլիվերին։ Դա այն հաստատված լռությունն էր, որը կարծես գրկել ու խլացրել էր Գուլիվերի ամբողջ էությունը։

Ապրելով քաղաքում, գյուղում, դաշտում և կամ նույնիսկ անմարդաբնակ լեռների ծոցում, մենք շրջապատված ենք ձայներով։ Ձայնն ու աղմուկը մարդու անրաժան ուղեկիցն են ծնվելու օրից՝ մինչև մահ։ Փակեցեք ձեր աչքերը և ականջ դրեք։— Ահա անցնում է մի ինքնաշարժ, դղրդում է նրա շարժակը և ոռնում է շչակը։ Խոսում, ծիծաղում, լալիս կամ բղավելով կռվում են մարդիկ... Կանչում է աքլորը, բառաչում են կովերը, ճրռնչում, հեծկլտում է ինչ որ ծակի մեջ տապ արած անխոնջ ծղրիդը...

Ձայն, ձայն կա չորս կողմը, ձայն կա ծովերի և գետերի ալիքների մեջ, ձայն կա մեռած ճահճի հարթ մակերեսի վրա, ձայն կա գետնափոր նկուղներում, սակայն ոչ մի ձայն չկա այս ընդարձակ դաշտավայրում, որտեղ ծնունդ էր առել մեր Նոր Գուլիվերը...

Անձրևաբեր ամպերից հետո ժպտացող տաք արևը կորցրել էր իր ամբողջ հմայքը, որովհետև Գուլիկը չէր լսում թռչնիկների ուրախ ծլվլոցը, որոնք դուրս գալով իրենց թագստոցներից, հոգեզմայլ ճռվողյունով լցրել էին ամբողջ շրջապատը։ Նա չէր լսում դալար մարդագետնի վերածված դարավոր անտառի հեքիաթային սվսվոցը։ Նրա վեց մետրանոց ականջները, իրենց հաստ թաղանթներով, չէին ընդունում ու զգում բնության գեղեցիկ, մարդուս համար օրգանական անհրաժեշտություն դառած այն աղմուկը, որն իբրև Կյանքի Սիմֆոնիա գուցե ավելի անհրաժեշտ է՝ քան հացն ու ջուրը։

Բացի այդ, Գուլիկը չէր զգում նաև օդի մեջ տարածված, կենսատու անձրևից առաջացած հրաշալի բուրմունքը։ Օդի մաքրությունը միայն վեր ու վար էր անում նրա վիթխարի կուրծքը և տղան ագահորեն շնչում էր վաղորդյան զով օդը։

— Միթե՞ ես խլացել եմ,— մտածեց նա սարսափած,— ինչո՞ւ այսքան լուռ է շուրջս, ինչո՞ւ ոչ մի ձայն չեմ լսում։

Եւ վախեցած այն մտքից որ մեծացնող փոշին կարող է փչացրած լինել իր լսողությունը՝ նա ընդոստ ոտի ցատկեց և ձեռքը բերանին տանելով, ամբողջ ուժով աղաղակեց.—

— Էհե՛յ... Ավա՛գ...

Թնդանոթների որոտի պես հուժկու այդ մրռնչյունը, դուրս թռչելով նրա հսկա կրծքից, ահեղադղորդ որոտմունքով տարածվեց չորս կողմն և լսելի եղավ 10-15 կիլոմետր շառավիղի վրա գտնվող բոլոր գյուղերում։

Գյուղացիք անհանգիստ դուրս վազեցին իրենց

խրճիթներից և պարզ երկնքում ամպի ոչ մի հետք չտեսնելով տարակուսած ու զարմանքով իրար էին նայում։

Անտառի վայրի բնակչությունը սարսափահար իրար անցավ։ Բնազդային սոսկումով մեծ ու փոքր գազանները թաքնվեցին որջերում իսկ բազմահազար թռչունները, ճղների մեջ թաքնվելով՝ լռեցին։

Գուլիկը, լսելով իր առողջ ձայնի մաքուր ելևեջները, հանգստացած ժպտաց ու սկսեց քայլել։

— Ես խուլ չեմ,—խոսեց նա ինքն իրեն խորին բավականությամբ,— խուլ չեմ, բայց կույր եմ, որովհետև ոչինչ չեմ տեսնում։ Կենդանիներն ու մարդիկ այժմ ինձ համար այնքան մանր են, որ նրանց տեսնելու համար խոշորացույց է պետք։

— Խոշորացույց...

— Բլրի լանջին կգտնես խոշորացույց...—հիշեց հանկարծ Գուլիկը գիտնականի վերջին հրահանգը.— Տասնհինգ կիլոմետրի վրա... Այո, այդ հանճարեղ ծերունին ոչինչ չի մոռացել... Գիտնականը նախօրոք պատրաստել է Նոր Գուլիվերի, իր դերբնական մտքերի և պրպտումների արդյունք, հսկա Գուլիկի համար այն բոլորը՝ ինչի նա պիտի կարիք ունենա այս նոր և տարօրինակ աշխարհում...

Բորյանի տված ցուցմունքի համաձայն Գուլիկը սկսեց քայլել գետի հոսանքի ուղղությամբ, դեպի պրոֆեսորի մատնանշած բլուրը։ Այդ տարածությունը նա անցավ մի քանի րոպեում։ Գուլիկի յուրաքանչյուր քայլը 60-70 մետր էր։ Նա քայլում էր ոտքի տակ տալով հարյուրավոր ծառերը, ցատկում էր անանցանելի ձորերի վրայով, և հաճախ ոտի մի հարվածով իր ճամբից դեն էր գցում

«փոքրիկ», 20-30 մետր բարձրությամբ քարերը։

Բլրին դեռ բավական մնացած, նա տեսավ արևի ճառագայթների տակ փայլփլող խոշորացույցը և արագ մոտ վազելով վերցրեց այդ անհրաժեշտ իրն այնպիսի ուրախությամբ, ինչպես Ռոբինզոնը կը վերցներ մի կատր հացը անմարդաբնակ կղզում։

Խոշորացույցի տրամագիծը 10 մետր էր և օղակված էր փայլուն, երկաթե շրջանակով։ Շրջանակի մի ծայրից ամրացած երկար շղթան հեշտությամբ անցավ Գուլիկի գլխով։ Տղան փոքրիկ մանկան նման անսահման հրճվանքով հանում, շոյում և նորից վզին էր գցում գեղեցիկ խոշորացույցը։ Շատ ժամանակ հետո միայն Գուլիկն իմացավ, թե ինչպիսի հսկայական դժվարությամբ և որքան զոհողությունների գնով է հասցրել խոշորացույցը մինչև այդ բլուրը և գետեղել նրա լանջին ծերունի գիտնականը։

Երկարելով գետնին Գուլիկը խոշորացույցով սկսեց զննել իր շրջապատի մանրիկ բնակիչներին։

Մանր, մորեխի մեծությամբ մի միջատ, որն անհանգստությամբ այս ու այն կողմ էր ընկնում՝ գրավեց մեր հերոսի ուշադրությունը։ Պահելով խոշորացույցը այդ միջատի վրա, Գուլիկը չկարողացավ զսպել իր ծիծաղը. վայրի խոզ էր—մեծ ժանիքներով մի ամեհի գազան, որին Գուլիկը այժմ կարող էր ճզմել մատի ամենաթեթև հպումով։

Այդ վտանգավոր գազանին ճկույթ մատով փոքր ինչ նեղացնելով, այս ու այն կողմ քշելուց հետո, Գուլիկն ուղղեց խոշորացույցը մի խումբ արագաշարժ միջատների վրա, որոնք աշխատում

էին բոպե առաջ անցնել բացատը և ծածկվել անտառում։

Գայլերի վոհմակ էր։ Ամբողջ գիշեր դաշտում թափառելուց հետո վերադառնում էին անտառ։ Մի վայրկյան նրա գլխում միտք ծագեց տրորել այդ փնասակար գազաններին ոտի տակ, բայց անմիջապես հետ վանեց իրենից այդ վատ միտքը հիշելով, որ ուժեղը չպիտի փնասի թուլին ու տկարին։

Զանազան մեծ ու փոքր գազաններին նայելը այն տխուր հետևանքն ունեցավ, որ Գուլիկը սաստիկ քաղց զգաց։ Խոշորացույցը հիանալի կերպով մեծացնում էր եղնիկներին ու նապաստակներին և մեր հերոսը, նայելով նրանց գիրուկ մարմիններին սկսեց մտածել, թե որքան համեղ կլիներ այդ կենդանիների մսի խորովածը...

Զգալով ինչպես բերանը սկսում է ջրակալել, խեղճ տղան դայրացած ոտքի ելավ և կախեց խոշորացույցը վզից։

— Ինչպե՞ս այդ խելոք ծերուկը չի մտածել, որ ես կարող եմ ուտելու պահանջ ունենալ,— դժգոհ փնթփնթում էր Գուլիկը՝ քայլելով հետ ու առաջ։ —Էլիպուտները կերակրում էին Գուլիվերին, բայց ով է կարող կերակրել ինձ, երբ ես մոտ երեք անգամ Գուլիվերից մեծ եմ։

Եվ իսկապես, նա չէր սխալվում.— Շուրջ 130 մետր հասակ ունեցող Գուլիկին մի պատառ միս տալու համար, պիտի մորթվեր առնվազն տաս հատ կով։ Քսան տոն ցորեն էր պետք, նրա ստամոքսին համապատասխան մի լավաշ թխելու համար և վերջապես մի մեծ սենյակի չափ բաժակ էր պետք,

որպեսզի 4 այդպիսի բաժակ ջուր խմելով նա կարողանա հագեցնել իր ծարավը։

Նման հուսահատ հաշիվները բոլորովին փչացրին մեր Գուլիկի ուրախ տրամադրությունը։

— Խելառ ծերուկը իր կուժն ու կուլեն հենց իմ գլխին պիտի փորձեր.—մտածում էր տղան ջղայնացած,— եթե իսկույն մի հնար չգտնեմ՝ սովից պիտի մեռնեմ։ Գնանք առաջ, տեսնենք ուր կհասնենք։

Եւ այդպես, խորասուզված դժոն ու անհրապույր մտքերի մեջ, ինքն իրեն խոսելով ու ձեռքերը թափահարելով, Գուլիկը գնաց դեպի առաջ, դեպի նոր կյանքի անորոշ ապագան։

ՀՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ

5.

Ի՞նչ է ասում գրաֆոլոգիան: Անսպասելի այցելություն: Բորյանի առաջին խոստովանությունն ու պահանջը:

Դուրս գալով փողոց, Ֆարջամուն թվաց, որ արևը սովորականից ավելի ուրախ է փայլում։

Երբեք և ոչ մի խուզարկուի չէին տրվել այնպիսի լիազորություններ, ինչպիսին ստացել էր Ֆարջամին իր շեֆից, պրոֆեսոր Բորյանի ոճրագործության ծալքերը բացելու համար։

Ֆարջամին գտել էր կծիկի ծայրը և նրա շեֆի կարծիքով այդքանը բավական էր՝ բացելու ամբողջ կծիկը։

Գործի անցնելուց առաջ Ֆարջամին պահանջ էր զգում առանձնանալու, կանոնավոր կերպով վերլուծելու և ուսումնասիրելու համար իր ձեռքին ունեցած փաստերն ու տվյալները։

Մտնելով իր առանձնասենյակը նա սուրճ պատվիրեց և ծխախոտ վառելով ընկղմվեց բազկաթոռի մեջ։

— Կասկածից դուրս է, որ Գուլիկից առաջ կորած երեխաներին էլ փախցրել է Բորյանը,— մտածում էր խուզարկուն,— բոլոր դեպքերը տեղի են ունեցել նույն փողոցում։

Բայց ինչու, ի՞նչ հրեշային նպատակի համար...

Այդ անլուծելի հարցը նրան խիստ անհանգստացնում էր։ Գիտնականի հետապնդած նպատակը մի մութ կետ էր, որը թույլ չէր տալիս բացել հանգույցը։

ՀԵՏԵՎՅԱԼ ՊՐԱԿՈՒՄ՝

Դուք կտեսնեք ինչպես հանճարեղ գիտնականը խոստովանելով իր կատարած ոճիրը ներում է պահանջում, սպառնալով հակառակ պարագային իր օգնական, Նոր Գուլիվերի աջակցությամբ հաղթահարել բոլոր արգելքները և հասնել իր նպատակին։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0684794

հշգ
212

ԳԻՆՆ Է 5 ՐԻԱԼ

ՆՈՐ ԳՈՒԼԻՎԵՐԸ

Ամենահետաքրքիր պատանեկական զրական-պատանեկական պատմվածքն է, որը կարդացվում է տեսակետ լարվածությամբ սկզբից մինչև վերջ եվ կոչված է լինելու ամեն մի աշակերտի սեղանի գարդը։

Գնեցեք և հավաքեցեք «ՆՈՐ ԳՈՒԼԻՎԵՐ»-ի բոլոր պրակները, որովհետև սպառվելուց հետո ոչ մի գնով չեք կարող ձեռք բերել պակասող պրակը։

Ստանալու համար «ՆՈՐ ԳՈՒԼԻՎԵՐ»-ի պրակները դիմել՝

ԹԵՀՐԱՆ
ՁԱՐՐԱՀ ՍԵՅԻԴ ԱԼԻ
„ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱԼԱՏ"
ՄՈՒՇԵՂ ՍԱՐՎԱՐՅԱՆԻՆ

Դրամական առաքումները՝

تهران جهار راه سید علی کاخ کودکان -

هوشنگ سروری

ՊԱՏՎԵՐՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ԿԱՆԽԻԿ